ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի դեկտեմբերի 25-Ն 246-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետով, 25-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020 թվականի գործունեության ծրագրի 2-րդ մասի 5-րդ կետում «ֆինանսատնտեսական գործունեություն» բառերը փոփոխել «պետական գույքի կառավարման հետ կապված հարաբերությունների իրականացման կազմակերպված գործընթաց» բառերով:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ